



ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՄԵՋ

ՊՈԼՍՈՆ ՆԱԽԻՆ ՊԱՏՐԻԱՐԲ Տ. ԶԱԿԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՍՈՍ ՏԵՐ-ԵՂԻԱՅԱՆԻ ԹԱՂՈՒՄԸ

«Արախ»-ը հաղորդում է.—

Հունիսի 4-ին Պաղտատեն ստացված հեռագիր մը կրեքեր գույժը Պոլսո նախկին Պատրիարք Գեր. Տ. Զավեն Ս. Արք. Տեր-Նղիայանի մահվան, որ տեղի ունեցած էր տեղւոյն մեջ նույն օրը, առավոտյան ժամը 9-ին, ավելացնելով թե մարմինը նրուաղեմ պիտի բերվեր ամփոփվելու համար Ս. Հակոբյանց վանքի գերեզմանատան մեջ: Այս տխուր առթիվ, կիբանանին կաթողիկոսական նվիրակ կուգար Գեր. Տ. Փառեն Նախկուպոս: Պատրիարք Հոր կարգադրությամբ մասնավոր պատվով ընդունվեցաւ Սրբազանը և վարդապետներու ու դպիրներու թափուրով Ս. Հակոբ եկեղեցի առաջնորդեցաւ, ուր իր ուխտը կատարելն վերջ Գլխադիրի սեղանին առջև, առաջնորդվեցաւ Ավագ նորան «Ուրախ լի»-ով: Այնտեղ է, որ Սրբազանը հայտնեց իր գալստյան պատճառը, նույն ատեն շնորհակալութիւն հայտնելով Միաբանության՝ իրեն ընձեռած այս պատիւին համար:

Մինչ այդ, հանգուցաւ Պատրիարքին դագաղը դեռ չէր ժամանած, ուշացած ըլլալով օգանավի արկածի մը պատճառով: Վերջապես, շարաթ օրը, կեսօրվա ժամը 1-ին լսվեցաւ տխուր դողանքը եկեղեցւոյ վանգին, որ ժողովուրդին կիմացներ մոտալուտ գալուստը դագաղին: Ժամը 1,15 ինքնաշարժը վանքին դրան առջև կանգ առաւ, իր հետ բերելով նաև հանգուցալին ազգականներն ու Պաղտատի Առաջնորդ Տեր-Հայրը:

Դագաղը դրան առջև գետեզվել է և վան-

քին Միաբանության ուղեկցությամբ երեք տեղ վար դրվելն ու ավետարան կարդացվելն վերջ տարվեցաւ եկեղեցի, ուր մնաց մինչև հաջորդ օրը:

Կիրակի առավոտ, պատարագին էր Տ. Փառեն, մինչ երգեցողութիւնները տպավորիչ կերպով տեղի կունենային ղեկավարութեանը տակ Պ. Ներսես խուտավերտյանի: Ողջունի ժամանակ Ամեն. Տ. Կյուրեղ Ս. Պատրիարք Հայրը խորան բարձրանալով մեծ հանդիսավորությամբ կատարեց օծման կարգը, որմէ հետո Միաբանության անդամներն ու դպրաց դասը ողջունի համբույրը օծյալի դագաղեն ափին, նկատելով որ դագաղին բերանը դոց էր:

Ամեն. Սրբազան Պատրիարք Հայրը հայտնապես հուզված, խոսեցաւ նաև հանգուցաւ Զավեն Արքեպիսկոպոսի մասին հոգեշունչ և ներկուր դամբանական մը:

Ժամը 11-ին սկսաւ հուղարկավորության տխուր արարողությունը: Ներկա էին օտար բարձրաստիճան անձնավորութիւններ, Հ. Մ. Բ. Մ-ի և Բարեսիրաց Միության սկստները և ժողովրդյան հոգնախոտն բազմութիւն մը, որոնք հետեցան դագաղին: Ծամբու ընթացքին յոթը տեղ դագաղը գետին դրվելն ետք հանգուցալին մարմինը ամփոփվեցաւ Ս. Փրկիչ եկեղեցւոյ Պատրիարքներու հատուկ գերեզմաններու կողքին:

Հանգիստ իր երկարամյա և հոգնատանջ ոսկորներուն:

ՄԱՀ ԵՎ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՐՈՒՍԱՂԵՍԻ ՊԱՏՐԻԱՐԲԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴ ԳԵՐ. ԳԵՎՈՐԳ ՎԱՐԴԱՊԵՏ ԶԱՆԱՋՑԱՆԻ

Շարաթ, 5 հուլիսի, առավոտյան ժամը 3-ին, ֆրանսիական հիվանդանոցին մեջ 77 տարեկան հասակին իր մահկանացուն կրեց Ս. Հակոբյանց Միաբանության սիրված և գործունյա անդամներեն Գևորգ վարդա-

պետ Ժանսզյան: Պարտք կզգանք հակիրճ կերպով փնսսագրականը տալ հանգուցալին, որ իրապես հարգված անձնավորութիւն մըն էր:

Գևորգ վարդապետ ծնած է Մարաշ,

1871 թ. հունվար 10-ին և փոքր տարիքին սիրած է եկեղեցականությունը: 1889-ին եկած է Երուսաղեմ, որպես ժառանգավորացի ուսանող: 1896-ին եղած է սարկավագ և միևնույն ատեն վարած լուսարարի պաշտոն Ս. տեղաց զանազան եկեղեցիներում մեջ: 1902-ին վեց ընկերներով վարդապետ ձեռնադրված է հանգուցյալ Հարություն պատրիարքին: 1905—1925 շարունակ տեսչական պաշտոններ ստանձնած է Սուրիա, Լիբանան և Պաղեստինի զանազան վայրերը, միևնույն ատեն վարելով դիվանատան, դանձապետություն և ավագ Թարգմանի, զանազան կարևոր պաշտոններ: Հանգուցյալ Թորգոմ Պատրիարքին մահեն ի վեր կվարեր պատրիարքական փոխանորդի պատասխանատու գործը: Իր մահով Վանքը կկորսնցնե իր ամենեն անձնավեր և միմիայն Վանքին շահուն համար աշխատող անձնավորություն մը, ինչպես կվկայեր Ս. Պատրիարք հայրը իր դամբանականին մեջ:

Օծման և հույարկավորության տխուր արարողությունը կատարվեցավ կիրակի օր: Փակ էր Մարաշի Հայրենակցական Միության Ակումբը և դրան առջև կախված էր սև վարագույր մը իբրև հարգանք Միության նախագահին հիշատակին: Օծումը կատարեց Ամենապատիվ Ս. Պատրիարք Հայրը, որմե

հետո հուզումով և արտասովոր աչքերով խոսեցավ դամբանական մը, հակիրճ կերպով տալով անոր կատարած գործերը:

Օծումեն հետո, «Ողջուն»-ի ժամանակ, եկեղեցին գտնվող Միաբանության անդամներն ու ժողովուրդը ողջունի համբույրը հանգուցյալին օծված աջին առին:

Ժամը 11-ին լավեցավ զանգակին տխուր դողանքը և հույարկավորության թափորը շարժվեցավ: Եկեղեցվու դրան երկու կողմերը կկենային Ս. Թարգմանաց վարժարանի երկսեռ սաները՝ հսկելու համար կարգապահություն: Ս. Պատրիարք Հայրը անձամբ կնախագահեր իր ամբողջ Միաբանական կազմով: Դագաղին կհետևեին նաև օտարազգի կրոնականներ և բարձրաստիճան անձնավորություններ:

Համբույր ընթացքին դագաղը հինգ անգամ վար դրվել և ավետարան կարդացվել հոք հասան վերջին հանգստարանը, ուր Մարաշի Հայրենակցական Միության կողմից խոսք առավ պ. Հարություն Ավագյան, դրվատելով հանգուցյալին արժանիքները, և դագաղը իջեցվեցավ սև հողը:

Հանգիտս իր հոգնարեկ ոսկորներուն:

ԹՂԹԱԿԻՑ

(«Արաբ» p. 26 1947 p.)

ՓԱՐԻԶԻ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՎՈՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Փարիզի Հայ Առաքելական Լուսավորչական Եկեղեցվու Վարչության դադրած անդամներուն տեղ նորերու ընտրությունը կիրակի օր տեղի ունեցավ:

Մեր ստացած տեղեկությանց համաձայն ազգային ժողովրդական ցանկը ջախջախիչ մեծամասնությամբ ընտրված է: Սպասելով պաշտոնական զեկուցին, կուտանք առավելագույն քվեով ընտրվածներուն ցանկը:—

Հարություն Մարաֆյան, Գառնիկ Պախիարյան, Պետրոս Պալքեճյան, Տոքտ. Ա. Տեր-Անդրեասյան, Լեոն Զորմիսյան, Պողոս Ասլանյան, Գեղամ Ֆեներճյան, Գամբր Պաղտատյան, Հակոբ Գարակույան:

Այս ընտրությունը, Մարսելի ընտրություններին հետո, կուգա հաստատելու հայ ժողովրդի միության և համագործակցության

ձգտումը, որմե մղված անիկա կոնակ կը դարձնե հասարակական կազմակերպություններու շուրջ պառակտում ստեղծողներուն:

Դաշնակցությունը, խրատված Մարսելի ընտրությանց արդյունքեն, դւր աղմկարար և գոհհիկ պայքար մը մղած էր, Փարիզի ընտրություններուն մասնակցեցավ առանց աղմուկի և իր ցանկին ու թեկնածուներուն վրա առանց իր ցուցանիշը դնելու Բայց քվեարկողները շխարվեցան: Իր ծանոթ թեկնածուն, Պ. Երվանդ Հարությունյան ստացավ... 55 քվե: Իսկ ազգային ժողովրդական ցանկի թեկնածուներուն ստացած առավելագույն քվեն է 574, իսկ նվազագույնը՝ 470:

Պարզ բաղդատություն մը, որ բավական խոստում է:

(«Ժողովուրդ» 29 հունիս 1947 p.)

ՏԱՀԱՏ ՎԱՐԴԱՊԵՏ ՈՒՐՅԱԼՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՓԱՐԻԶԻ

„ԱՐԵՎՍՈՒՏԲ“ ԹԵՐԹԻ ԽՄԱԳՐԻՆ

Անթիլիան, 4 մայիս 1947 թ.

Հարգելի խմբագիր «Արևմուտք» թերթի 2եր թերթի 21 թիվ ապրիլ 13 համարին մեջ «Օգնենք Կիլիկիո Կաթողիկոսին» վեր-

տառությամբ և Կիլիկեցի մը ստորագրությամբ հոդվածը Միաբանությունս և

Կաթողիկոսարանիս շուրջ համախմբված մտավորականությունը մեծապես ուրախացուց և խանդավառեց: Այդ հոգևածը մեզ մտածել տվավ, թե մեր սիրեցյալ Հայրապետը Ձեր ևս մտածման և հետաքրքրության առարկան է և Անտր բարենպաստակ ծրագիրները և անոնց իրականացումը, ինչպես մեզ, Ձեզ ևս ուրախություն կպատճառեն, որպես հարազատ հայեր, մշակույթ և անցյալ գնահատող անհատներ: Կիսափաթեխը, որ հորվածագրի միտքերը տարածվեին Ձեր գաղութին մեջ, զանազան շրջանակներին ներս, և դրական արդյունքներ տալին հոգուտ Կիլիկյան դարավոր և պանծալի Աթոռին, որը այժմ կապրի իր վերածնունդի շրջանը շնորհիվ Տ. Տ. Գրեգորի Ա. Կաթողիկոսի, որուն բարձր հովանիին տակ Լիբանանի այս խաղաղ մասին մեջ կաճի, կհառաջդիմե և ինքն իր մեջ զորանալով կդառնա արտասահմանի հայության տեականացման և պահպանման գլխավոր ազդակներին մին, իր եկեղեցական և մշակութային ձեռնարկներովը:

Արդեն Ձեզի ծանոթ է թե մեր Հայրապետի գեղեցիկ կարգադրությամբ հոկտեմբեր ամիսը Կիլիկյան թեմերու համար նշանակված է հայ մշակույթի պանծացման ամիս: Հանդիսավոր պատարագներ կմատուցվին և մասնավոր քարոզներ կխոսվին մեր եկեղեցիներին ներս և քանախոսություններ ու հանդեսներ կկազմակերպվին մշակութային հաստատություններին և դպրոցներին ներս: Կոզեկոչվին մեր բյուրավոր ծանոթ ու անծանոթ մշակները, հայ ժողովուրդի մտքի և հոգիի ստեղծիչները:

Վեհը, մայիս ամսվա մեջ, օր մը նշանակած է որպես Կաթողիկոսարանիս օր: Այդ օր մեր ժողովուրդին կհրամցվի գեղարվեստական բացառիկ արժեք ներկայացնող հայտագիր մը: Անցյալ տարի առաջին անգամ ըլլալով ներկայացվեցավ Վահան Թեքեյանի «Եկեղեցին Հայկականը», օրաթորիոյ վերածված երաժիշտ Տիար Համբարձում Պերպերյանի կողմէ: Իսկ այս տարի մայիս 11-ին տեղի պիտի ունենա Կաթողիկոսարանի օրվան կապված մեծ նվագահանդես մը, որ պիտի պանծացվի անմահ Կոմիտասի գործը՝ իր ծննդյան 75-ամյակի առթիվ:

Նույնպես Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ անցյալ ամառ սեպտեմբերին Կաթողիկոսարանիս մեջ տեղի ունեցավ Կիլիկյան թեմերու ազգային վարժարաններու ուսուցիչներուն համագումարը: Կստաթիվեցան ծրագիրներու նույնացման աշ-

խատանքներ և եղան մանկավարժական դասախոսություններ:

Վեհափառ նախաձեռնությամբ կազմված է նաև Մտավորականներու Ժողով մը, որը իր առաջին նիստը գումարեց Վեհափառ Հայրապետի նախադասությամբ Կաթողիկոսարանիս դահլիճին մեջ և որուն ղեկավարական բաժնին իր մասնակցությունը բերավ Ձեզի ծանոթ ջութակահար Տիար Ֆիլիփ Աղազարյան:

Շնորհիվ Վեհափառ Հայրապետի հոգաժողովյան Կիլիկյան Միաբանությունը իր ծաղկումի շրջանն է որ կապրի: Ունեցանք Աթոռիս վարդապետ միաբաններին հինգ նոր եպիսկոպոսներ, որոնք թեմերու մեջ և Կաթողիկոսարանին ներս կարեւոր պաշտոններ ունին:

Կիլիկյան Դպրեվանքը սկսավ իր արդյունքները տալ մի մոտո պիտի ունենանք չորս նոր կուակիրոն քահանաներ (վարդապետ), երկու ազգ սարկավազներ և երկու շրջանավարտ քահանայացուներ: Այս ձևով Աթոռիս Միաբանությունը պիտի լեցնե ան պակասն ու կարիքը, որ կնկատվի մեր եկեղեցիներին ու թեմերին ներս:

Ունինք Մատենադարան, ուր հավաքված են մոտ յոթ հազար հատոր գիրքեր, առանձին դարակներու մեջ: Ունինք նաև ձեռագրաց բաժին մը և հնագիտական արժեք ներկայացնող հին գրամներ, որ նոր սկսած ենք հավաքել: Սակայն այժմու Մատենադարանի շենքը անհարմար է որպես մատենադարանի շենք: Մեր գիրքերուն համար արդիական շենքի մը պետք ունինք, ուր պիտի կարենանք գիտական մեթոտներով մեր նախնայոց ժառանգությունը պահել և անվթար փոխանցել հաջորդ սերունդներուն և օգտադրօժել հոգուտ գիտություն:

Վեհափառ Հայրապետի անմիջական հսկողությամբ կկազմակերպվի և Կաթողիկոսարանիս տպարանը: Ամեն ամիս կանոնավորապես կհրատարակենք մեր պաշտոնաթերթ «Հասկ»-ը: Բացի սովորական «Հասկ»-ին այս տարի պիտի հրատարակվի փոսական «Հասկ»-ը, որ տեսակ մը Կաթողիկոսարանիս տարեգիրքը պիտի ըլլա, գիտական, գեղարվեստական, գրական և բանասիրական ճոխ բովանդակությամբ:

Մոտերս տպարանը լույս ընծայեց Վեհափառ Հայրապետի «Այս և կեանք» վերնագրով, քարոզներու, ազգային-եկեղեցական և հայրենասիրական բովանդակությամբ, հորվածներու շարքը: Սկսավ տպագրվի «Տիգրան Մեծ»-ի նվիրված աշխատություն մը, որ պատրաստած է ամերիկահայ բանասեր Հրանտ Արմեն: Սակայն ավելի

մեծ համեմատությամբ մշակութային գործեր և երկեր ի լույս ընծայելու համար անհրաժեշտորեն պետք ունինք արագատիպ մամուլի մը, ինչպես նաև տողաշարի մը և տպագրական այլ կազմածներու:

Այս ձևով Վեհափառ Հայրապետի ունեցած երազներն ու ծրագրերները սկսած են իրականանալ որոշ չափով: Մակայն Վեհր ավելին կցածնական: Կուզեմ, որ Կիլիկյան Աթոռը բարձրանա, խորանա և վերակենդանանա: Իր բառերով. — «Միրելիք, Մենք կկամենայինք, որ այս Աթոռը դառնա Հայոց եկեղեցվո հաստատության և հաւատնւորյան մեծ սյուններից մեկը: Մեր Աթոռի գիտակցական և ստեղծագործական կյանքը, մեր Միաբանության և Աթոռի զարգացումը: Այս բոլորը Աթոռի շուրջ է, բայց Զեղհանուր եկեղեցվո բարգավաճման նպատակով երեւոյր պետք է դառնա»: Ուրեմն նորին Վեհափառության ամբողջ ճիգն է, որ մեր Կիլիկյան դարավոր Աթոռը դառնա Հայոց եկեղեցվո հաւատնւորյան մեծ սյուններից մեկը և այս հօգուտ ընդհանուր հայության և հօգուտ հայ ազգանքների ու պահպանման և տեղականացման:

Մեր գիտնական և ծերունազարդ Հայրապետին այս դիպեցիկ և օգտավետ երազներուն և ծրագրերներուն ամբողջական իրականացումը հայ ժողովուրդին կախված է, ինչպես ինք Վեհափառը կրսն՝ «Իմ երազների իրականացումը Զեղհից է կախված»: «Պետք է օգնեմք ինձ»: «Մեկ սու իսկ գրպանս չի մտնի, ցարդ իմ կողմն հավաքված գումարներից»: «Յանեցեք, որ հեճեք»:

Երանի՜ թե մեր ժողովուրդը լսե՛ր իր Հայ-

րապետին այսքան սրտառու կանչը՝ «Պետք է օգնեմք ինձ»: Օ՛ն գաղութահայություն, օգնե՛նք Վեհափառին նյութապես, որպեսզի կարենա իրագործել իր ա՛յնքան զեղեցիկ և օգտաշատ ծրագրերնրը Հայ եկեղեցվո և մշակութային տեսականացման ի խնդիր: Օգնե՛նք Անոր, որպեսզի Կիլիկյան Վանքը տիպար վանքի մը վերածե, բարձրացնե Դպրեվանքի ուսման մակարդակը, ճոխացնե Մատենադարանը, արդյունավոր դարձնե տպարանը և բաղամացնե Միաբանության թիվը:

Նյութը անցողական է, իսկ աշխատանքը մնալուն և տևական: «Յանեցեք, որ հեճեք»:

Տվե՛ք Վեհափառ Հայրապետին բոլոր միջոցները ու հնարավորությունները, որպեսզի իր թանկագին վայրկյաններն ու երկվայրկյանները արդյունավորվին, ատորանան, և իրենց բարեբար արդյունքները տան, որ ծաղկեցնե, բարձրացնե և նախանձնիլ դիրքի հասցնե մեր Կիլիկյան դարավոր այս Աթոռը, մշակութային, կրօնական և եկեղեցական ձեռնարկներով: Տա՛նք իրեն որ հնարավորություն ունենա ի լույս ընծայելու մեր նախնայաց թանկագին Հիշատակներն ու Հիշատակաբանները, արժեքներն ու արժանիքները, միշտ սա ի մտի ունենալով, թե ի՛նչ որ տանք Վեհափառին, նույնությամբ և՛ ավելիով պիտի վերադարձնե մեզ և Ձեզի:

«Յանեցեք, որ հեճեք»:

Տե՛ր խմբագիր, կհուսամ մեր հայտնած միտքերն ու գաղափարները հանրության կիտխանցեք Ձեր օգտակար թերթի միջոցով, որով միամ լավագույն հաջողության մարդնանքնրով:

Աղոթաբար ՏԱՀԱՏ ՎԱՐԴԱՊԵՏ ՈՒՐԵԱԼՅԱՆ

Միաբան Ուխտին Կիլիկիա

(«Արևմուտք», հունիս 1, 1947 թ.)

ԳԵՐ. ԱՐՏԱՎԱԶԴ ԱՐՔԵՊԻՍԱԿՈՊՈՍ ԿԸՆԴՈՒՆԻ ԳԵՐԱՊՈՅՏԱՌ ՈՒԼՈՒՀՈՋՅԱՆ ԱՐՔԵՊԻՍԱԿՈՊՈՍԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Վենետիկի Մխիթարյան Միաբանության Աբբահայր Ուլուհոճյան Արքեպիսկոպոս, ընկերակցությամբ Սևրի Մխիթարյան վարժարանի տնօրեն Հայր Սահակ վարդապետին, այցելեց Ամենայն Հայոց Վեհափառ Կաթո-

ղիկոսի Հայրապետական նվիրակ Գեր. Արտավազդ Արքեպիսկոպոս Սյուրմեյանի: Հյուրերը սիրալիք կերպով ընդունվեցան հայրապետական պատվիրակին:

(«Ժողովուրդ», 13 հուլիս, 1947 թ.)

ԱՐՏԱՎԱԶԴ ՍՐԲԱՋԱՆ ՀՈՒՆԵՍԱՅԻ ՄԵԶ

Եվրոպայի Հայրապետական նվիրակ Տ. Արտավազդ Արքեպիսկոպոս հունիսի 20-ին ուրբաթ առավոտ Հոյանտա մեկնած է, հով-

վական այցելություն տալու համար Հոլանդալի հայ գաղութին:

(«Ժողովուրդ», 22 հունիս, 1947 թ.)